

## Արձանագրություն N 160

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2017թ-ի  
մարտի 27 -ի նիստի  
Օրակարգ

1. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ամբիոնների 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի ընթացքի քննարկում/զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. Թեկնածուական ատենախոսության թեմաների հաստատում /զեկ.՝ գիտ. քարտուղար, դոցենտ Խ. Գալստյան/:
3. Աշխատությունների տպագրության երաշխավորության հարցը/զեկ.՝ Խ. Գալստյան/:
4. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետից ԵՊՀ գիտխորհրդի կազմում թեկնածության առաջադրում:
5. Դոցենտի կոչման համար մրցույցի անցկացում/զեկ.՝ Խ. Գալստյան/:
6. Ընթացիկ հարցեր:

### Խորհուրդը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ամբիոնների վարիչների հաղորդումները 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ:
2. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները. ա/ ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ *Խոսքովադուխտ Ազատյան՝ «Պատլամենտարիզմի առանձնահատկություններն ու միտումները փոխակերպվող հասարակություններում»*, ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանին: բ/ ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հայցորդ *Սոֆյա Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Քաղաքական կոնֆլիկտների դրսևորման առանձնահատկությունները ՀՀ-ում»*, ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանին: գ/ ԵՊՀ առկա ուսուցման ասպիրանտ *Դավիդ Սարկիսյանի թեկնածուական ատենախոսության թեման փոխել և հաստատել նոր թեման՝ «ՌԴ-ի նկատմամբ ԳԴՀ-ի քաղաքականությունն ու դրա փոխակերպումները ժամանակակից փուլում»* վերտառությամբ ԻԳ. 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել պ.գ.դ., պրոֆեսոր Գ. Պետրոսյանին: դ/ *Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ Արտաշես Ծապույանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել՝ «ԶԺՀ-ի ռազմավարությունը Եվրասիական միության հետ*

**հարաբերություններում»,** ԻԳ. 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանին:

3. Միջազգային հարաբերությունների ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Հ. Նազարյանի «Տեղեկատվական պատերազմներ և դիվանագիտություն» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:
4. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետից ԵՊՀ գիտական խորհրդի կազմում առաջադրել ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պ. գ. թ., դոցենտ Վահրամ Պետրոսյանի թեկնածությունը:
5. Ընտրել ա/ հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար բ.գ.թ. Արամ Սաֆարյանի անունը:  
բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 29 անդամներից քվեարկությամբ մասնակցել են 21-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ`

**Սաֆարյան Արամ – 21 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:**

***ԵՊՀ Միջազգային հարաբերությունների  
ֆակուլտետի ղեկան, Գիտական խորհրդի  
նախագահ, պրոֆ.***

***Գ. Պետրոսյան***

***ԵՊՀ Միջազգային հարաբերությունների  
Ֆակուլտետի Գիտական խորհրդի քարտուղար, դոց.***

***Խ. Գալստյան***